

Հավելված
Հաշվեքննիչ պալատի
2021թ. ապրիլի 30-ի թիվ 107-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



ԸՆԹԱՅԻՎ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ
ՏԱՐԵԿԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածական մաս -----	էջ 3
2. Ամփոփագիր -----	էջ 5
3. Հաշվեքննության օբյեկտի ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ -----	էջ 7
4. Անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումներ-----	էջ 29
5. Հաշվեքննությամբ արձանագրված այլ փաստեր -----	էջ 30
6. Եզրակացություններ-----	էջ 31
7. Առաջարկություններ -----	էջ 32

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը

Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի 2021 թվականի փետրվարի 10-ի թիվ 20-Ա որոշում:

Հաշվեքննության օբյեկտը

Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ:

Հաշվեքննության առարկան

Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի 2020 թվականի պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:

Հաշվեքննության առարկայի չափանիշները

1. ՀՀ կառավարության 26.12.2019 թվականի «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 1919-Ն որոշում:
2. «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենք:
3. ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշում
4. ՀՀ կառավարության 12.03.2020 թվականի թիվ 296-Ա որոշում
5. ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 12-ի թիվ 274-Ն որոշում
6. ՀՀ կառավարության 07.05.2020 թվականի թիվ 715-Ն որոշում
7. ՀՀ կառավարության 03.09.2020 թվականի թիվ 1455-Ն որոշում

Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը

2020 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը:

Հաշվեքննության կատարման

2021 թվականի փետրվարի 16-ից մինչև 2021 թվականի ապրիլի 30-ը ներառյալ:

Ժամկետը

Հաշվեքննության մեթոդաբանությունը

Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ՀՀ պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույցի, ՀՀ հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանությունների համաձայն:

Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ և վերակատարում ընթացակարգերը:

Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանում

Հաշվեքննությունն իրականացվել է Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի վեցերորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի նախագահ Լևոն Յոլյանը:

2. ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի տարեկան ճշտված պլանով Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմը (այսուհետ՝ Աշխատակազմ) կատարող է հանդիսացել 58 միջոցառման գծով: Հաշվետու ժամանակահատվածի պլանը կազմել է 21,893,784.10 հազ. դրամ, ճշտված պլանը՝ 26,077,122.24 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 19,631,599.24 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախսը)՝ 20,193,757.31 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 20,199,269.45 հազ. դրամ: Հաշվետու ժամանակահատվածում ճշտված պլանի նկատմամբ բյուջեն կատարվել է 77.44%-ով:

Աշխատակազմում հաշվեքննությունն իրականացվել է տասը միջոցառման շրջանակներում՝ ընդամենը 11,787,961.43 հազ. դրամ դրամարկղային ծախսով:

Ըստ առանձին միջոցառումների՝ հաշվեքննության ընթացքում արձանագրվել են հետևյալ էական փաստերը՝

1. 1003-11007 «Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային վարակի (COVID-19) ախտորոշման միջոցառումների իրականացում» և 1003-31001 «Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային վարակի (COVID-19) կանխարգելման, վերահսկման, բուժման նպատակով բժշկական սարքերի ձեռքբերում» միջոցառումների իրականացման շրջանակներում ձեռքբերված ապրանքների ներմուծման մաքսային հայտարարագրերը բացակայել են:

2. 1091-11001 «Հանրային իրազեկում և հասարակական-քաղաքագիտական հետազոտություններ» միջոցառման իրականացման նպատակով Աշխատակազմի և «Հանրային կապերի և տեղեկատվական կենտրոն» ՊՈԱԿ-ի միջև կնքված «Դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» պայմանագրի 2.3.2 կետի համաձայն՝ Աշխատակազմը **պարտավոր է կատարել** Ծրագրի (առանձին Միջոցառումների) իրականացման մոնիթորինգ, որը սակայն չի կատարվել:

3. 1136-11001 «Ծառայությունների, ծրագրերի համակարգում» միջոցառման 4111 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցներից որոշ աշխատակիցների հատկացվել է մեկ ամսվա պաշտոնային դրույքաչափից ավելի պարգևատրում:

4. Աշխատակազմի 700 հաստիքից 143-170 հաստիքը 2020 թվականի ընթացքում չի համալրվել:

5. 1136-11011 «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր» միջոցառման շրջանակում չեն պահպանվել ՀՀ վարչապետի աշխատակազմի և ընտրված երեք կազմակերպությունների՝ «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի,

«Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի, «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ի միջև կնքված դրամաշնորհի հատկացման վերաբերյալ պայմանագրերի 3.6 և 3.8 կետերի պահանջները՝ չի ներկայացվել կանխավճարային վճարման հայտը և չօգտագործված գումարի մասով չեն նվազեցվել յուրաքանչյուր ամսվա վճարումները:

Լ. Յոլյան

ՀՀ հաշվեքննիչ պալատի նախագահ

30.04.2021թ.

ՀՀ հաշվեքննիչ պալատ

Բաղրամյան, 19 փող., ք. Երևան, Հայաստան

3. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕՐՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի տարեկան ճշտված պլանով հաշվետու ժամանակահատվածի պլանը կազմել է 21,893,784.10 հազ. դրամ, ճշտված պլանը՝ 26,077,122.24 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 19,631,599.24 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախսը)՝ 20,193,757.31 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 20,199,269.45 հազ. դրամ: Հաշվետու ժամանակահատվածում ճշտված պլանի նկատմամբ բյուջեն կատարվել է 77.44%-ով:

Ստորև ներկայացվել է հաշվեքննությամբ ընդգրկված միջոցառումների վերաբերյալ ֆինանսական տեղեկատվություն.

Աղյուսակ 1

Հաշվեքննությամբ ընդգրկված միջոցառումներ

հազ. դրամ

N	Միջոցառում, հոդված				Փաստ
1	1003-11007	Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային վարակի (COVID-19) ախտորոշման միջոցառումների իրականացում	4266	- Առողջապահական և լաբորատոր նյութեր	1,129,409.30
2	1003-31001	Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային վարակի (COVID-19) կանխարգելման, վերահսկման, բուժման նպատակով բժշկական սարքերի ձեռքբերում	5122	- Վարչական սարքավորումներ	655,782.26
3	1018-32001	Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի շրջանակներում էլեկտրոնային կառավարման համակարգերի և սարքավորումների ձեռքբերում	5129	- Այլ մեքենաներ և սարքավորումներ	1,772,208.14
4	1091-11001	Հանրային իրազեկում և հասարակական-քաղաքագիտական հետազոտություններ	4637	- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին	1,022,845.60
5	1136-11001	Ծառայությունների, ծրագրերի համակարգում	4111	- Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	2,563,624.15

6	1136-11011	Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր	4521	- Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպություններին	1,038,089.41
7	1136-12007	Աջակցության տրամադրում ոչ պետական կազմակերպություններին	4639	- Այլ ընթացիկ դրամաշնորհներ	748,761.00
8	1213-11001	Առողջապահության ոլորտում վերահսկողության ծառայություններ	4111	- Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	771,586.07
9	1213-11007	Սննդամթերքի անվտանգության բնագավառում վերահսկողության ծառայություններ	4111	- Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	933,035.07
10	1223-11001	Հայաստանի Հանրապետության շահերի ներկայացմանն ու պաշտպանությանն ուղղված փաստաբանական, իրավաբանական ծառայություններ	4861	- Այլ ծախսեր	1,152,620.43
ԸՆԴԱՄԵՆԸ					11,787,961.43

ԾՐԱԳԻՐ՝ 1003 «Հանրային առողջության պահպանում»

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ 11007 «Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային վարակի (COVID-19) ախտորոշման միջոցառումների իրականացում»

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ 31001 «Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային վարակի (COVID-19) կանխարգելման, վերահսկման, բուժման նպատակով բժշկական սարքերի ձեռքբերում»

1003 «Հանրային առողջության պահպանում» ծրագրի պատասխանատուն ՀՀ առողջապահության նախարարությունն է, կատարողը՝ ՀՀ վարչապետի աշխատակազմը:

ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով 11007 «Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային վարակի (COVID-19) ախտորոշման միջոցառումների իրականացում» միջոցառման 4266 «Առողջապահական և լաբորատոր նյութեր» հոդվածով տարեկան ճշտված պլանով նախատեսվել է 1,229,506.20 հազ. դրամ, ֆինանսավորումը, փաստը (դրամարկղային ծախսը) և փաստացի ծախսը կազմել են՝ 1,129,409.30 հազ. դրամ:

31001 «Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային վարակի (COVID-19) կանխարգելման, վերահսկման, բուժման նպատակով բժշկական սարքերի ձեռքբերում» միջոցառման 5122 «Վարչական սարքավորումներ» հոդվածով տարեկան ճշտված պլանով նախատեսվել է 755,782.30 հազ. դրամ,

Ֆինանսավորումը, փաստը (դրամարկղային ծախսը) և փաստացի ծախսը կազմել են՝ 655,782.26 հազ. դրամ:

1003 «Հանրային առողջության պահպանում» ծրագրի 11007 և 31001 միջոցառումների հաշվետու ժամանակաշրջանի ճշտված պլանով գումարները հատկացվել են համաձայն ՀՀ կառավարության համապատասխան որոշումների, որոնցով սահմանվել է, որ գնումներն իրականացվում, իսկ վճարումները կատարվում են հաշիվ-ապրանքագրերի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 12-ի թիվ 296-Ա որոշմամբ նախատեսված կարգով՝ հաշվի առնելով նաև, որ սույն կետով նախատեսված գործարքների նկատմամբ չեն կիրառվում նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման թիվ 1 հավելվածի 32-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 12-ի թիվ 296-Ա որոշման 1-ին կետի՝ Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային վարակի (COVID-19) կանխարգելման, վերահսկման, բուժման և այլ համալիր միջոցառումների շրջանակում գործարքները կարող են կատարվել առանց գրավոր պայմանագրերի կնքման՝ վճարումները կատարելով նաև հաշիվ-ապրանքագրի կամ հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնի հիման վրա, ինչպես նաև բացառիկ դեպքերում առանց վերջիններիս առկայության:

Վարչապետի աշխատակազմը, որպես ծախսերի իրականացման հիմք, ներկայացրել է ներքոնշյալ հաշիվները, որոնցում նշված ամփոփ տեղեկատվությունը ներկայացվել է ստորև.

Աղյուսակ 2

1003 «Հանրային առողջության պահպանում» ծրագրի կատարման վերաբերյալ

Հ/Հ	Հաշվի (Invoice) համար, ամսաթիվ	Վաճառող/մատակարար	Գնորդ	Գումար	Վճարման հանձնարարականի ամսաթիվ	Վճարված գումար (հազ. դրամ)
	1003-11007 Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային վարակի (COVID-19) ախտորոշման միջոցառումների իրականացում միջոցառում, ընդամենը					1,129,409.30
1	HMEC20200327 27.03.2020թ.	Hunan Machinery and Equipment IMP and Exp Corp	Վարչապետի աշխատակազմ	369,000 ԱՄՆ դոլար	30.03.2020	185,754.60
2	HMEC20200328 28.03.2020թ.	Hunan Machinery and Equipment IMP and Exp Corp	Վարչապետի աշխատակազմ	369,000 ԱՄՆ դոլար	30.03.2020	185,754.60

3	Lk2020032901, 31.03.2020թ.	Hebei Link-All Supply Chain Management CO., LTD	Վարչապետի աշխատակազմ	565,000 ԱՄՆ դոլար	02.04.2020	288,150.00
4	HMEC20200402 , 02.04.2020թ.	Hunan Machinery and Equipment IMP and Exp Corp	Վարչապետի աշխատակազմ	120,000 ԱՄՆ դոլար	03.04.2020	61,140.00
5	HMEC20200403 , 02.04.2020թ.	Hunan Machinery and Equipment IMP and Exp Corp	Վարչապետի աշխատակազմ	72,000 ԱՄՆ դոլար	03.04.2020	36,684.00
6	1/04/2020/FV/EX T 05.04.2020թ.	D-LAC Driessen Laboratory Consulting,	Վարչապետի աշխատակազմ	320,000 Եվրո	07.04.2020	175,296.00
7	200403-01 03.04.2020թ.	Biotech Biomedicine Shenyang Group Ltd.	Չինաստանում Հայաստանի դեսպանություն	253,977.7 ԱՄՆ դոլար	07.04.2020	128,665.10
6	SPXG20- KWD12, 01.04.2020թ.	National Pharmaceutical Foreign Trade Corporation	Չինաստանում Հայաստանի դեսպանություն, գումարը փոխանցվել է Ֆրուկտուս ՍՊԸ- ին վարչական ակտի համաձայն	138,000 ԱՄՆ դոլար	15.05.2020	67,965.00
1003-31001 Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային վարակի (COVID-19) կանխարգելման, վերահսկման, բուժման նպատակով բժշկական սարքերի ձեռքբերում միջոցառում, ընդամենը						655,782.26
1	HMEC20200327 , 27.03.2020թ.	Hunan Machinery and Equipment IMP and Exp Corp	Վարչապետի աշխատակազմ	1,228,900 ԱՄՆ դոլար	30.03.2020	618,628.26
2	փոխանցման հաշիվ 01.04.2020 և հաշիվ վավերագիր 09.04.2020	«Արպանիվ» ՍՊԸ	Վարչապետի աշխատակազմ		02.04.2020	37,154.00

Տարվա ընթացքում ձեռքբերված ապրանքները համապատասխան հանձնման-ընդունման ակտերով հանձնվել են ՀՀ առողջապահության նախարարությանը:

Վարչապետի աշխատակազմի կողմից չեն ներկայացվել հաշվետու տարվա ընթացքում 11007 «Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային վարակի (COVID-19) ախտորոշման միջոցառումների իրականացում» և 31001 «Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային վարակի (COVID-19) կանխարգելման,

վերահսկման, բուժման նպատակով բժշկական սարքերի ձեռքբերում» միջոցառումների շրջանակներում ձեռքբերված ապրանքների ներմուծման մաքսային հայտարարագրերը:

1003 «Հանրային առողջության պահպանում» ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի վերաբերյալ ներկայացվել են նաև Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմում 2020 թվականի պետական բյուջեի երեք, վեց, ինը ամիսների կատարման ընթացիկ եզրակացությունները, որոնք տեղադրվել են ՀՀ հաշվեքննիչ պալատի պաշտոնական կայքում:

ԾՐԱԳԻՐ՝ 1018 «Պետական հատվածի արդիականացում»

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ 32001 «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի շրջանակներում էլեկտրոնային կառավարման համակարգերի և սարքավորումների ձեռքբերում»

1018 «Պետական հատվածի արդիականացում» ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև 18.11.2015 թվականին կնքվել է թիվ 8539-AM համաձայնագիրը, որով բանկը տվել է իր համաձայնությունը Հայաստանի Հանրապետությանը տրամադրելու 21 000 000 ԱՄՆ դոլար վարկ: Մինչև 01.01.2020 թվականը 21 000 000 ԱՄՆ դոլար վարկային միջոցներից ծախսվել է 4,816,573.8 ԱՄՆ դոլար, այդ թվում 5129 «Այլ մեքենաներ և սարքավորումներ» հոդվածով՝ 3,842,066.8 ԱՄՆ դոլար (որը կազմում է վարկային միջոցների 18.3 %):

Ծրագրի նախատեսված փակման ամսաթիվն է 30.11.2022 թվականը, մայր գումարի վճարման ժամանակահատվածը՝ 01.05.2030 թվականից մինչև 01.05.2040 թվականը:

Ծրագրի նպատակն է հանրային ֆինանսական հաշվետվությունների որակի և ընտրված էլեկտրոնային կառավարման կատարելագործված ծառայությունների հասանելիության բարելավումը: Ծրագիրը բաղկացած է չորս մասից՝

1. Պետական ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգեր
2. Ծառայությունների մատուցման բարելավմանն ուղղված էլեկտրոնային կառավարման լուծումներ
3. Կարողությունների զարգացում և կարողությունների ստեղծման փոքր միջամտություններ
4. Ծրագրի կառավարում

Ծրագիրն ընդգրկում է երկու միջոցառում՝

1. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագիր,

2. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի շրջանակներում էլեկտրոնային կառավարման համակարգերի և սարքավորումների ձեռքբերում:

Հաշվեքննությունն իրականացվել է «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի շրջանակներում էլեկտրոնային կառավարման համակարգերի և սարքավորումների ձեռքբերում» միջոցառման շրջանակներում:

31.12.2019թ. դրությամբ ծրագրի հատուկ հաշվի մնացորդը կազմել է 1,499,836.6 ԱՄՆ դոլար: Ծրագրի շրջանակներում «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի շրջանակներում էլեկտրոնային կառավարման համակարգերի և սարքավորումների ձեռքբերում» միջոցառման 2020 թվականի տարեկան ճշտված պլանով 5129 «Այլ մեքենաներ և սարքավորումներ» հոդվածով նախատեսվել է 2,043,090.80 հազ. դրամ ծախս, փաստը (դրամարկղային ծախսը) կազմել է՝ 1,772,208.14 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 109,103.73 հազ.դրամ (1,663,104.42 հազ. դրամ՝ վարկային միջոցներից, 109,103.73 հազ. դրամ՝ ՀՀ համաֆինանսավորումից), փաստացի ծախսը՝ 1,772,208.14 հազ. դրամ: Արդյունքում 2020 թվականի ընթացքում օգտագործվել է նախատեսված միջոցների 86.74 %-ը: Ծախսերը փաստացի ուղղվել են էլեկտրոնային կառավարման համակարգերի և համակարգչային սարքավորումների մատակարարմանը:

Մատակարարումներն իրականացվել են թվով ութ պայմանագրերի շրջանակներում, որոնցից չորսը կնքվել է 2019 թվականին: Բոլոր ութ պայմանագրերով իրականացված վճարումները հիմնավորվել են մատակարարված ապրանքների համապատասխան հանձնման-ընդունման ակտերով, դուրս գրված հարկային հաշիվներով և վճարման անդորրագրերով:

Պայմանագրերի հակիրճ նկարագիրը

1. 2020 թվականի հուլիսի 24-ին կնքված թիվ PSMP-GO-2-2-19/1 պայմանագրի շրջանակներում «Յունիքոմփ» ՓԲ ընկերության կողմից (մատակարար) ՀՀ վարչապետի աշխատակազմի պատվերով (գնորդ) ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի համար մատակարարված սարքավորումների դիմաց իրականացվել են վճարումներ՝ ընդամենը 24,056.86 հազ. դրամի չափով: Մատակարարումը հիմնավորված է 15.09.2020 թվականին կնքված համապատասխան հանձնման-ընդունման ակտով: Նշված մատակարարման գնման գործընթացը ևս իրականացվել է հաշվետու ժամանակահատվածում: Համաձայն 2020 թվականի հուլիսի 20-ի ապրանքների ձեռքբերման գնահատման հաշվետվության՝ 29.06.2020 թվականի ARMEPS համակարգի միջոցով ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության

պետական հանձնաժողովի համար սարքավորումների ձեռք բերման նպատակով հայտարարվել է բաց մրցույթ 60,000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ (ներառյալ ԱԱՀ) գնահատված արժեքով: Մրցույթի հաղթող է ճանաչվել 24,070.40 հազ. դրամ գնառաջարկ ներկայացրած միակ հայտատուն՝ «Յունիքոմփ» ՓԲ ընկերությունը, որի հետ էլ հետորակավորման արդյունքում 24.07.2020 թվականին կնքվել է պայմանագիր:

2. 2019 թվականի օգոստոսի 16-ի թիվ PSMP-GO-2-2-9/A-3 պայմանագրով ՀՀ ոստիկանության համար օպերատիվ կառավարման և պիլոտային համակարգերի ներդրման և պահանջվող սարքավորումների ձեռքբերման նպատակով «ՍՕՍ Սիսթեմս» ՍՊԸ ընկերությանը ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից վճարվել է 271,501.50 հազ. դրամ: Մատակարարված սարքավորումների և ծառայությունների հանձնումը հիմնավորված է մատակարարի և գնորդի միջև կնքված համապատասխան հանձնման – ընդունման ակտերով:

3. 2020 թվականի փետրվարի 17-ի թիվ PSMP3-GO-2-2-20/1 պայմանագրով «ՍՈՎՈՒԱՆՈ» ՍՊԸ ընկերության կողմից փոխվարչապետի գրասենյակի համար համակարգչային տեխնիկայի մատակարարման դիմաց իրականացվել են վճարումներ՝ 30,416.62 հազ. դրամի չափով, այդ թվում՝ մատակարարման գումարը կազմել է 30,416.62 հազ. դրամ, սակայն մատակարարման ուշացման համար հաշվարկվել է նաև տույժ՝ 164.17 հազ. դրամի չափով, որը վճարման ժամանակ հաշվանցվել է: «ՍՈՎՈՒԱՆՈ» ՍՊԸ ընկերության և փոխվարչապետի գրասենյակի ղեկավարի միջև կնքված հանձնման-ընդունման ակտերով համապատասխան համակարգչային տեխնիկան հանձնվել է փոխվարչապետի գրասենյակ:

4. 2019 թվականի մարտի 25-ի թիվ PSMP3-GO-2-2-12 պայմանագրով «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամ և «Յունիքոմփ» ՓԲԸ-ից կազմված համատեղ ձեռնարկության կողմից ՀՀ վարչապետի աշխատակազմի Քաղաքացիական ծառայության գրասենյակին մատակարարված՝ Համակարգի փոխանցման և վերապատրաստման 4-րդ փուլով նախատեսված ծառայությունների դիմաց վճարվել է 58,101.51 հազ.դրամ: Մատակարարումը հիմնավորված է «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամ և «Յունիքոմփ» ՓԲԸ-ից կազմված համատեղ ձեռնարկության (որպես մատակարար) և ՀՀ վարչապետի աշխատակազմի Քաղաքացիական ծառայության գրասենյակի (որպես գնորդ) միջև կնքված համապատասխան հանձնման-ընդունման ակտերով:

5. 2019 թվականի հունվարի 15-ին ՀՀ վարչապետի աշխատակազմի և «ՎԻ Իքս Սոֆթ» Լիմիթեդ և «Յունիքոմփ» ՓԲԸ Համատեղ ձեռնարկության միջև կնքված թիվ PSMP3-GO-2-2-6/1 պայմանագրի շրջանակներում նախատեսված մշակման,

գործարկման և տվյալների փոխանցման ծառայությունների դիմաց «ՎԻ Իքս Սոֆթ» Լիմիթեդ ընկերությանը վճարվել է 120,606.84 հազ. դրամ: Նշված ծառայությունները ընդունվել են ՀՀ արդարադատության նախարարության գլխավոր քարտուղարի կողմից համապատասխան հանձնման- ընդունման ակտերով:

6. PSMP3-GO-2-2-7/1 պայմանագրի շրջանակներում համապատասխան հանձնման- ընդունման ակտերով «Գրին Սիսթեմս» ՍՊԸ-ն և «Յունիքոմփ» ՓԲԸ Համատեղ ձեռնարկությունը հանձնել, ՀՀ վարչապետի աշխատակազմն ընդունել է սարքավորումներ, որոնց դիմաց վճարվել է 1,214,113.08 հազ. դրամ:

7. PSMP3-GO-2-2-20/2.1 պայմանագրի շրջանակներում հանձնման-ընդունման ակտով «Սմարթլայն» ՍՊԸ-ն հանձնել, ՀՀ փոխվարչապետի աշխատակազմն ընդունել է 2,324.00 հազ.դրամ ընդհանուր գումարով գրասենյակային պարագաներ:

8. PSMP3-GO-2-2-3/1 պայմանագրի շրջանակներում համապատասխան հանձնման- ընդունման ակտերով «ՎԻ Իքս Սոֆթ» Լիմիթեդ և «Յունիքոմփ» ՓԲԸ Համատեղ ձեռնարկությունը իրականացրել է 51,087.71 հազ. դրամ արժողությամբ քաղաքացիների հետ հետադարձ կապի միասնական պորտալի, զանգերի կենտրոնի և mobile id համակարգերի մատակարարումը դրանց տեղադրման հետ միասին:

ԾՐԱԳԻՐ՝ 1091 «Հանրային իրազեկում»

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ 11001 «Հանրային իրազեկում և հասարակական- քաղաքագիտական հետազոտություններ»

ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով ՀՀ վարչապետի աշխատակազմի 11001 Հանրային իրազեկում և հասարակական-քաղաքագիտական հետազոտություններ միջոցառման տարեկան պլանով 4637 «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին» հոդվածով նախատեսվել է 733,555.60 հազ. դրամ, ճշտված պլանը, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել է 1,022,845.60 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 959,870.49 հազ. դրամ: Դրամարկղային ծախսը ավելի է փաստացի ծախսից 62,975.11 հազ. դրամով:

Վարչապետի աշխատակազմի և «Հանրային կապերի և տեղեկատվական կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ 08.01.2020 թվականին կնքվել է «Դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» թիվ 01 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), որի համաձայն Վարչապետի աշխատակազմը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով ՊՈԱԿ-ին հատկացնել ՀՀ կառավարության թիվ 1919-Ն որոշմամբ նախատեսված տարեկան

կտրվածքով մինչև 733,555.6 հազ. դրամ, որը ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 12-ի թիվ 274-Ն և 2020 թվականի մայիսի 7-ի թիվ 715-Ն որոշումների հիման վրա տարվա ընթացքում ավելացվել է 289,290.0 հազ. դրամով և դարձել 1,022,845.60 հազ. դրամ:

Միջոցառման 959,870.49 հազ. դրամ փաստացի ծախսից 704,577.36 հազ. դրամը «Հանրային կապերի և տեղեկատվական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից դուրս գրված հարկային հաշիվների հանրագումարն է, 255,293.13 հազ. դրամը նախորդ տարիների ԱԱՀ-ի գծով պարտավորությունների մարման ծախսերը (որից՝ 254,290.0 հազ. դրամը հատկացվել է ՀՀ կառավարության 07.05.2020 թվականի 715-Ն որոշմամբ):

Պայմանագրի 3.4 կետով կազմակերպությանը վճարումները կատարվում են անկանխիկ ձևով, յուրաքանչյուր ամիս՝ Պայմանագրի 1.1 կետով սահմանված ամսական համամասնությունների չափով, իսկ պայմանագրի 3.3 կետով կազմակերպությունը յուրաքանչյուր ամսվա համար դուրս է գրում հարկային հաշիվ, որի գումարը (հարկման բազան առանց ԱԱՀ) հաշվարկվում է Կազմակերպության տվյալ ամսվա, պայմանագրով սահմանված դրամաշնորհի գումարի հաշվին, փաստացի (հաշվեգրված (հիմնական միջոցների ձեռք բերումները ներառվում են ամբողջ արժեքով)) կատարված ծախսերի չափով: Պայմանագրի 2.4.8 կետով կազմակերպությունը պարտավոր է որոշմամբ սահմանված կարգով և ժամկետներում Միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները (խնայողությունները) վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

Աշխատակազմի կողմից ներկայացվել է 15.01.2021 թվականի վճարման հանձնարարական, համաձայն որի 62,975.11 հազ. դրամը վերադարձվել է ՀՀ պետական բյուջե:

Վարչապետի աշխատակազմի և «Հանրային կապերի և տեղեկատվական կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ 08.01.2020 թվականին կնքված «Դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» թիվ 01 պայմանագրի 3.2 կետի համաձայն ՊՈԱԿ-ի կողմից տարվա ընթացքում ներկայացվել է միջոցառումների կատարման վերաբերյալ 4 հանձնման-ընդունման արձանագրություն, որտեղ ներկայացվել է գործառույթների կատարման քանակական ցուցանիշներ: Հանձնման-ընդունման արձանագրությամբ ներկայացված ցուցանիշների քանակի և պայմանագրի փաստացի կատարված ցուցանիշների միջև առկա տարբերությունները և տարբերության պատճառները հրապարակվել են «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ՝ ըստ միջոցառումները կատարող հանրային իշխանության մարմինների» հաշվետվությամբ ՀՀ ֆինանսների նախարարության

պաշտոնական

էլեկտրոնային

կայքում՝

https://minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvutyun/

1091-11001 «Հանրային իրազեկում և հասարակական-քաղաքագիտական հետազոտություններ» միջոցառման իրականացման նպատակով Վարչապետի աշխատակազմի և «Հանրային կապերի և տեղեկատվական կենտրոն» ՊՈԱԿ-ի միջև 08.01.2020 թվականին կնքված «Դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» թիվ 01 պայմանագրի 2.1 և 2.3 կետերի կատարման վերաբերյալ Աշխատակազմի կողմից տրամադրված տեղեկատվությունը ներկայացվել է աղյուսակ 3-ում.

Աղյուսակ 3

«Դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» պայմանագրի թիվ 01-ի 2.1 և 2.3 կետերի վերաբերյալ

Պայմանագրի կետեր	Կատարման վերաբերյալ
2.1 Աշխատակազմն իրավունք ունի	
2.1.1 ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.	Անհրաժեշտություն չի առաջացել
2.1.2 Որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի 6.1-ին կետով նախատեսված տուգանքը.	Չեն արձանագրվել
2.1.3 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝	Չեն կիրառվել
ա. Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու.	Չեն արձանագրվել
բ. Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված առանձին Միջոցառումների իրականացման ժամկետները (Միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում).	Ժամկետները չեն խախտվել
գ. իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.	Չեն արձանագրվել
2.1.4 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:	Պայմանագիրը չի լուծվել
2.3. Աշխատակազմը պարտավոր է՝	
2.3.1. Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը	Նախատեսված դեպքեր չեն

	արձանագրվել
2.3.2. կատարել Ծրագրի (առանձին Միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման համակարգի մարմինների հետ.	Անհրաժեշտություն չի առաջացել
2.3.3. իրականացնել Ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ	Այլ աշխատանքներ կատարելու անհրաժեշտություն չի առաջացել

Ծրագիր՝ 1136 «ՀՀ վարչապետի լիազորությունների իրականացման ապահովում»

Միջոցառում՝ 11001 «Ծառայությունների, ծրագրերի համակարգում»

Հոդված՝ 411100 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ»

4111 հոդվածով տարեկան ճշտված պլանով նախատեսվել է 2,564,017.1 հազ. դրամի, ֆինանսավորումը կազմել է 2,564,017.1 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախսը)՝ 2,563,624.1 հազ. դրամ, փաստացի ծախսը 2,563,578.2 հազ. դրամ:

Համաձայն ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից տրամադրված Client-Treasury համակարգից արտահանված տեղեկանքի՝ 4111 հոդվածով կատարված դրամարկղային ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է ստորև՝

ՀՀ վարչապետի աշխատակազմի 2020 թվականի 1136 «ՀՀ վարչապետի լիազորությունների իրականացման ապահովում» ծրագրի 11001 «Ծառայությունների, ծրագրերի համակարգում» միջոցառման 4111«Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածից կատարված դրամարկղային ծախսերի վերաբերյալ

հազ. դրամ

Վճարման նպատակ	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	ԸՆԴԱՄԵՆԸ
Աշխատավարձ	-	98,389.0	104,061.1	218,355.1	110,593.5	820.0	200,362.2	10,454.2	91,453.3	98,491.0	105,506.2	195,695.7	1,234,181.4
Եկամտային հարկ	-	39,020.5	29,342.4	40,515.5	38,767.6	34,775.9	40,880.8	39,211.4	57,237.5	48,380.8	37,003.6	150,622.2	555,758.3
Սոցիալական վճար	-	2,560.8	2,533.8	2,959.9	1,869.7	2,584.2	2,553.9	6,235.6	6,559.6	7,064.8	3,755.3	19,265.8	57,943.4
Դրոշմանիշային վճար	-	528.0	536.0	540.0	126.0	520.0	297.0	165.0	205.0	537.0	527.0	768.0	4,749.0
Արձակուրդային վճար	9,585.8	12,724.1	10,093.5	2,845.9	10,837.7	15,655.4	32,704.8	61,293.1	34,802.7	6,838.5	10,915.1	43,129.1	251,425.6
Պարգևավճար	-	234.9	15,599.6	15,063.9	4,236.2	11,527.6	3,713.9	5,149.7	56,052.9	4,193.7	7,584.7	239,821.7	363,178.7
Վերջնական հաշվարկ	3,121.1	2,619.4	2,294.8	3,602.5	288.6	4,915.8	7,264.5	2,260.4	6,961.0	5,104.0	5,111.4	8,222.6	51,766.0
Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստ	1,059.2	6,460.5	2,059.1	1,936.2	3,521.4	1,991.4	3,920.2	637.1	7,102.2	1,722.9	5,375.4	1,632.8	37,418.3
Օգնություն	197.6	836.7	158.7	-	-	437.0	423.2	-	379.4	-	-	513.9	2,946.5
Թաղման նպաստ	396.8	265.2	-	-	-	-	-	365.1	989.5	132.3	-	264.6	2,413.4
Անդամավճար	-	200.7	212.1	249.3	235.2	213.0	271.5	265.0	304.1	316.0	234.5	777.1	3,278.6
ԴԱՀԿ	-	72.2	66.2	44.2	-	91.5	40.7	-	25.3	140.1	33.4	89.9	603.5
Մնացորդ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	393.0	393.0
Ընդամենը	14,360.5	163,912.1	166,957.3	286,112.3	170,476.0	73,531.8	292,432.7	126,036.7	262,072.6	172,921.1	176,046.6	661,196.2	2,566,055.8

Client-Treasury համակարգից արտահանված տեղեկանքի համաձայն՝ 2,566,055.8 հազ. դրամից 2,038.75 հազ դրամը հաշվետու ժամանակահատվածում ծախսի վերաձևակերպումներն են, իսկ 393.0 հազ. դրամը տարեվերջի պետական բյուջեի մնացորդն է:

Համաձայն ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի 2019 թվականի օգոստոսի 2-ի թիվ 785-Լ հրամանի՝ Վարչապետի աշխատակազմում նախատեսվել է 720 հաստիք, որը 2019 թվականի դեկտեմբերի 1-ի թիվ 1583-Լ հրամանով կատարված փոփոխության արդյունքում դարձել է 700 հաստիք:

Համաձայն Աշխատակազմի կողմից տրամադրված տեղեկատվության՝ աշխատակիցների քանակը կազմել է 530-557, որի արդյունքում 4111 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածից առաջացած տնտեսված միջոցներից տրամադրվել է 363,178.7 հազ. դրամ պարգևատրում, որի վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը ներկայացվել է աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5

4111 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածից տրամադրվող պարգևատրումներ

հազ. դրամ

ՀՀ	Ամիս	Պարգևատրում ըստ Client-Treasury համակարգի	Ըստ ընդլայնված հաշվետվության	
			Վճարված պարգևավճար (հաշվարկված)	Պարգևատրում ստացած աշխատակիցների քանակ
1	Հունվար		234.9	2
2	Փետրվար	234.9		
3	Մարտ	15,599.6	15,599.6	300
4	Ապրիլ	15,063.9	15,063.9	83
5	Մայիս	4,236.2	4,236.2	22
6	Հունիս	11,527.6	11,527.6	152
7	Հուլիս	3,713.9	3,713.9	43
8	Օգոստոս	5,149.7	8,660.4	46
9	Սեպտեմբեր	56,052.9	56,735.9	504
10	Հոկտեմբեր	4,193.7	294.7	1
11	Նոյեմբեր	7,584.7	11,669.8	82
12	Դեկտեմբեր	239,821.7	235,441.9	500
Ընդամենը		363,178.7	363,178.7	

Հաշվեքննության ընթացքում պարգևատրման հրամանների և որոշումների ընտրանքային կարգով ուսումնասիրման արդյունքում պարզվել է, որ ՀՀ վարչապետի

25.12.2020 թվականի թիվ 1428-Ա որոշմամբ բարեխիղճ աշխատանքի համար դրամական պարգևատրմամբ խրախուսված որոշ աշխատակիցների պարգևատրման գումարը գերազանցում է մեկ ամսվա պաշտոնային դրույքաչափը: Համաձայն «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 22 հոդվածի 10-րդ մասի՝ Աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցներից պետական ծառայողը հատուկ առաջադրանքների և (կամ) որակյալ աշխատանքի կատարման համար պարգևատրվում է իր մինչև մեկ ամսվա պաշտոնային դրույքաչափով՝ անմիջական ղեկավարի առաջարկությամբ կամ ՀՀ օրենքներով սահմանված համապատասխան լիազորություններով օժտված պաշտոնատար անձի հայեցողությամբ:

4111 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով ծախսերի արժանահավատության գնահատման նպատակով ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի մայիսի 26-ի թիվ 93-Լ որոշմամբ հաստատված մեթոդաբանության համապատասխան կատարվել է ընտրանք՝ կիրառելով Դրամական միավորի ընտրանքի մեթոդը: Իրականացվել է ընտրված աշխատակիցների աշխատավարձի հետ կապված իրավական ակտերի, ինչպես նաև կատարված հաշվարկների (եկամտային հարկ, դրոշմանիշային և սոցիալական վճարներ) ուսումնասիրություն, որի արդյունքում անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել:

ԾՐԱԳԻՐ՝ 1136 «ՀՀ վարչապետի լիազորությունների իրականացման ապահովում»

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ 11011 «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր»

ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով ՀՀ վարչապետի աշխատակազմի 11011 Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր» միջոցառման 452100 - «Սուբսիդիաներ ոչ պետական, ոչ ֆինանսական կազմակերպություններին» հոդվածով տարվա ճշտված պլանը կազմել է 3,132,078.80 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 330,524.41 հազ. դրամ (ՀՀ պետական բյուջեի միջոցներից) և փաստը՝ (դրամարկղային ծախսը) - 1,038,089.41 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 1,038,089.41 հազ. դրամ: Փաստացի ծախսը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 33.1 %:

Թիվ 8390-AM վարկային պայմանագրով նախատեսվող աշխատանքները իրականացնելու նպատակով ՀՀ վարչապետի աշխատակազմի և ընտրված երեք կազմակերպությունների՝ «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամ, «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամ, «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ միջև կնքվել են դրամաշնորհի հատկացման վերաբերյալ պայմանագրեր:

Վերոնշյալ հոդվածով 2020 թվականի ընթացքում երեք կազմակերպություններին կատարվել են վճարումներ, որը ներկայացվել է աղյուսակում 6-ում:

Աղյուսակ 6

1136-11011 «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր» միջոցառման ծախսերը

h/h	Կազմակերպություն	Պայմանագրի համար	ՀԲ վարկային միջոցներից	ՀՀ համաֆին. միջոցներից	Ընդամենը
1	«Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամ	TPQI-EIF-OP	264,043.38	126,827.64	390,871.02
2	«Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամ	TPQI-ISC-OP	12,724.30	5,975.27	18,699.57
3	«Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ	TPQI-ANIF-OP	430,797.31	197,721.50	628,518.81
Ընդամենը վճարումներ՝ (հազ. դրամ)			707,564.99	330,524.41	1,038,089.40
ԱՄՆ դոլար			1,440,185.73	669,458.04	2,109,643.77

2020 թվականի ընթացքում վերը նշված միջոցառմանը հատկացվել է 1,038,089,40 հազ.դրամ, որից 707,564.99 հազ դրամը ՀԲ վարկային միջոցներից և 330,524.41 հազ.դրամը ՀՀ համաֆինանսավորման միջոցներից:

1. «Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ»

ՀՀ վարչապետի աշխատակազմը մի կողմից և «Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ»-ը մյուս կողմից, կազմակերպության կանոնադրական նպատակների իրականացման աջակցության նպատակով, 2020 թվականի մայիսի 4-ին կնքել են դրամաշնորհի հատկացման վերաբերյալ պայմանագիր:

Պայմանագրի առարկան վարկային համաձայնագրով նախատեսված պետական-մասնավոր գործընկերությունների և համաֆինանսավորվող դրամաշնորհների իրականացման նպատակով կազմակերպության գործառնական ծախսերի փոխհատուցումն է:

Առաջին տրանշը ստանալու վերաբերյալ հայտը ներկայացվել է 06.05.2020 թվականին, ընդամենը՝ 114,228.00 հազ.դրամ, որից 85,961.00 հազ. դրամ վարկային միջոցից և 28,367.00 հազ.դրամ համաֆինանսավորման հաշվին:

Ներկայացված տեղեկանքների և 11.05.2020 թվականի վճարման հանձնարարականի համաձայն այն բավարարվել է 11.05.2020 թվականին, որը համապատասխանում է նշված կետի պահանջներին:

Կազմակերպության կողմից ներկայացված հաշվետվության համաձայն մայիս ամսին կատարել է 34,644.36 հազ. դրամի գործառնական ծախսեր:

«Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ»-ի տարեկան նախահաշվով ընդհանուր ծախսեր է նախատեսվել 1,257,615.15 հազ.դրամ, ընդամենը թվով 5 բաղադրիչների շրջանակներում վճարվել է 390,871.01 հազ. դրամ, կամ 31.08 %:

2. «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ

Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմը մի կողմից և «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲ ընկերությունը մյուս կողմից 15.05.2020թ. կնքվել է դրամաշնորհի հատկացման վերաբերյալ TPQI – ANIF – OP պայմանագիրը:

Պայմանագրի առարկան ներդրողներին և արտահանողներին ուղղված առանցքային ծառայությունների իրականացումն է, ինչպիսիք են՝

- 1) Մարքեթինգի և խթանման աշխատանքներ իրականացնելու նպատակով արտահանման և ներդրումների առանցքային օտարերկրյա շուկաներում հայկական ներկայացուցչությունների ստեղծման հետ կապված ծախսերի ֆինանսավորումը,
- 2) Արտահանման մի շարք ծրագրերի և շուկայի հետազոտության ծառայությունների, այդ թվում «Արտահանողի ուղեցույցի», «Արտահանմանը պատրաստվածության գնահատումների» և «Արտահանման ուսուցման ծրագրերի» մշակման հետ կապված ծախսերի ֆինանսավորումը,
- 3) Իմիջի ձևավորման և ներդրումային իրազեկման ծառայությունների իրականացում,
- 4) ՆԱԽԱԶԳ-ի համար տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքի ստեղծում ներառյալ SS սարքավորումների գնումը և հաճախորդների հետ կապը կառավարման (ՀԿԿ/CRM) համակարգի մշակումը՝ գործառնությունների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով,
- 5) Ուսուցման և կարողությունների զարգացման աշխատանքների իրականացումը,
- 6) Միջազգային փորձագետների վարձումը:

Նշված պայմանագիրը կնքվել է 15.05.2020 թվականին, հայտը ներկայացվել է 19.05.2020 թվականին, որով որպես կանխավճար պահանջվել է վարկային միջոցներից 71,044.16 հազ.դրամ և համաֆինանսավորման միջոցներից 22,120.96 հազ. դրամ, ընդամենը՝ 93,165.63 հազ.դրամ: 21.05.2020 թվականի և 22.05.2020 թվականի վճարման հանձնարարականներով նշված գումարները փոխանցվել են:

Մայիս ամսին, ինչպես նաև տարվա հաջորդ ամիսներին, չնայած հաշվին առկա է եղել պահանջվածից ավելի գումար՝ վճարման համապատասխան հանձնարարականներով, իրականացվել է պահանջված գումարների ամբողջությամբ վճարում:

Գործառնական ծախսերի տարեկան նախահաշվով նախատեսվել է 1,227,231.59 հազ. դրամ ընդհանուր ծախսեր, տարվա ընթացքում վճարվել է 628,518.81 հազ. դրամ, կամ 51.31%:

3. «Ներդրումների աջակցման կենտրոն»

Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմը և «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամը 2020թ. մայիսի 15-ին կնքել են դրամաշնորհի հատկացման վերաբերյալ պայմանագիր:

«Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի 25.05.2020 թվականի թիվ 20/210-20 գրության՝ 20.01.2020-30.04.2020թ.թ. ժամանակահատվածում ծախսերը կազմել են 2,900.06 հազ. դրամ, որը 26.05.2020 թվականի դուրս գրված 3 հարկային հաշվի հանրագումարն է, որոնց համաձայն մատակարարումն իրականացվել է 29.02.2020, 31.03.2020 և 30.04.2020 թվականին:

Պայմանագրի առարկան վարկային համաձայնագրով նախատեսված համաֆինանսավորվող դրամաշնորհների իրականացման նպատակով կազմակերպության գործառնական ծախսերի ֆինանսավորումն է:

Դրամաշնորհի գումարը կազմում է գործառնական ծախսերի ընդհանուր գումարը:

Գործառնական ծախսերի տարեկան նախահաշվով սպասվող ընդհանուր ծախսերը նախատեսվել է 29,252.00 հազ.դրամ, 2020 թվականի ընթացքում վճարվել է ընդամենը 18,699.57 հազ. դրամ, կամ 63.92%:

Վերը նշված դրամաշնորհի հատկացման վերաբերյալ երեք պայմանագրերի համաձայն առկա է հետևյալը.

պայմանագրի 3.5 կետով՝ պայմանագիրը ստորագրելուց հետո կազմակերպության կողմից դրամաշնորհի առաջին տրանշը ստանալու վերաբերյալ հայտի ներկայացմանը հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում ԾԿԳ-ն (Ծրագրերի կառավարման գրասենյակը) իրականացնում է առաջին վճարումը:

Պայմանագրի 3.6 կետով՝ հետագա վճարումներն իրականացվում են հետևյալ կարգով՝ յուրաքանչյուր ամսվա ավարտին հաջորդող մինչև 3-րդ աշխատանքային օրը կազմակերպության կողմից ԾԿԳ-ին ներկայացված հաշվետվությունը (ներառյալ ծախսերը հիմնավորող փաստաթղթերի պատճենները) 5 օրյա ժամկետում ԾԿԳ-ի կողմից հաստատվելու և կազմակերպության կողմից հաջորդ ամսվա հայտ ներկայացվելու դեպքում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ԾԿԳ-ն իրականացնում է հաջորդ ամսվա համար կանխավճարային վճարում:

Պայմանագրի 3.8 կետի՝ յուրաքանչյուր ամսվա վճարումները նվազեցվում են նախորդ ամսվա անընդունելի ծախսի գումարի չափով կամ չօգտագործված գումարի մասով:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ չեն ապահովվել պայմանագրի 3.6 և 3.8 կետերի պահանջները, այն է՝ հաջորդ ամսվա ծախսերի համար կանխավճարային վճարում կատարելու հայտ ներկայացնելը և չօգտագործված գումարի մասով յուրաքանչյուր ամսվա վճարումները նվազեցնելը:

ԾՐԱԳԻՐ՝ 1136 «ՀՀ վարչապետի լիազորությունների իրականացման ապահովում»

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ 12007 «Աջակցության տրամադրում ոչ պետական կազմակերպություններին»

ՀՈԴՎԱԾ՝ 4639 «Այլ ընթացիկ դրամաշնորհներ»

ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով 12007 Աջակցության տրամադրում ոչ պետական կազմակերպություններին միջոցառման 4639 «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» հոդվածով տարեկան ճշտված պլանը, ֆինանսավորումը, փաստը և փաստացի ծախսը կազմել է 748,761.0 հազարական դրամ:

Աշխատակազմի կողմից ներկայացվել է «Դիլիջան ինտերնեյշնլ սքուլ օֆ Արմենիա» հիմնադրամում ՀՀ պետական եկամուտների կողմից իրականացված ստուգման արդյունքում 20.07.2020 թվականին կազմած թիվ 3003072 ակտը, համաձայն որի շահութահարկի գծով ենթակա է ՀՀ պետական բյուջե լրացուցիչ գանձման 750,016,62 հազ. դրամ, որից՝ պակաս ցույց տրված հարկի գումարը կազմել է 448,429.23 հազ. դրամ, տուգանքը՝ 224,214.61 հազ. դրամ, տույժը՝ 77,372.78 հազ. դրամ: Նշված հարցի վերաբերյալ ներկայացվել է նաև Վարչապետի 21.07.2020 թվականի թիվ 02/16.20/34973-2020 հանձնարարականի կատարման վերաբերյալ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 23.07.2020 թվականի թիվ 044/61419-2020 գրությունը և ՀՀ ֆինանսների նախարարի 29.07.2020 թվականի թիվ 034/62876-2020 գրությունը:

ՀՀ կառավարության 03.09.2020 թվականի թիվ 1455-Ն որոշմամբ ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից 748,761.0 հազ. դրամ է հատկացվել 1136-12007 «Աջակցության տրամադրում ոչ պետական կազմակերպություններին» միջոցառմանը՝ որպես աջակցության տրամադրում «Դիլիջան ինտերնեյշնլ սքուլ օֆ Արմենիա» հիմնադրամին՝ հարկային պարտավորության վճարման գծով:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության թիվ 1455-Ն որոշումը՝ ՀՀ վարչապետի աշխատակազմի և «Դիլիջան ինտերնեյշնլ սքուլ օֆ Արմենիա» հիմնադրամի միջև 29.09.2020 թվականին կնքվել է թիվ ՀՀՎԱ-1455-1 պայմանագիրը, որի 1.1 կետի համաձայն Աշխատակազմը պարտավորվում է «Դիլիջանի միջազգային դպրոց» ծրագրի իրականացման ընթացքում առաջացած հարկային պարտավորության մարման նպատակով Կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված 748,761.0 հազ. դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է մարել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 2020 թվականի հուլիսի 20-ին

ընդունված թիվ 3003072 ակտի հիման վրա առաջացած պարտավորությունը պայմանագրով և որոշմամբ սահմանված կարգով:

Համաձայն «Դիվիզան ինտերնեյշնլ սքուլ օֆ Արմենիա» հիմնադրամի տնօրենի տեղեկանքի՝ հիմնադրամը 02.10.2020 թվականին ստացել է 748,761.0 հազ. դրամ համաձայն կողմերի միջև կնքված ՀՀՎԱ-1455-1 պայմանագրի և կատարել է 2020 թվականի հուլիսի 20-ին ընդունված թիվ 3003072 ակտի հիման վրա առաջացած պարտավորությունը՝ կցելով 750,016.62 հազ. դրամ գումարով թիվ 002917 վճարման հանձնարարագիրը:

ԾՐԱԳԻՐ՝ 1213 «Տեսչական վերահսկողության պահպանում»

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ 11001 «Առողջապահության ոլորտում վերահսկողության ծառայություններ»

ՀՈԴՎԱԾ՝ 4111 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ»

ՀՀ 2020թ. պետական բյուջեով 11001 «Առողջապահության ոլորտում վերահսկողության ծառայություններ» միջոցառման 4111 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով ճշտված պլանը և ֆինանսավորումը կազմել է 772,547.15 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախսը) կազմել է 771,586.07 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 769,634.41 հազ. դրամ:

4111 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով ծախսերի արժանահավատության գնահատման նպատակով ՀՀ հաշեքննիչ պալատի 2020 թվականի մայիսի 26-ի թիվ 93-Լ որոշմամբ հաստատված մեթոդաբանության համապատասխան կատարվել է ընտրանք՝ կիրառելով Դրամական միավորի ընտրանքի մեթոդը: Իրականացվել է ընտրված աշխատակիցների աշխատավարձի հետ կապված իրավական ակտերի, ինչպես նաև կատարված հաշվարկների (եկամտային հարկ, դրոշմանիշային և սոցիալական վճարներ) ուսումնասիրություն, որի արդյունքում անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել:

ԾՐԱԳԻՐ՝ 1213 «Տեսչական վերահսկողության պահպանում»

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ 11007 «Սննդամթերքի անվտանգության բնագավառում վերահսկողության իրականացման ծառայություններ»

ՀՈԴՎԱԾ՝ 4111 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ»

ՀՀ 2020թ. պետական բյուջեով 11007 «Սննդամթերքի անվտանգության բնագավառում վերահսկողության իրականացման ծառայություններ» միջոցառման 4111 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով տարեկան ճշտված պլանը և ֆինանսավորումը կազմել է 933,516.90 հազ. դրամ, փաստը

(դրամարկղային ծախսը)՝ 933,035.07 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 937,987.85 հազ. դրամ:

4111 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով ծախսերի արժանահավատության գնահատման նպատակով ՀՀ հաշեքննիչ պալատի 2020 թվականի մայիսի 26-ի թիվ 93-Լ որոշմամբ հաստատված մեթոդաբանության համապատասխան կատարվել է ընտրանք՝ կիրառելով Դրամական միավորի ընտրանքի մեթոդը: Իրականացվել է ընտրված աշխատակիցների աշխատավարձի հետ կապված իրավական ակտերի, ինչպես նաև կատարված հաշվարկների (եկամտային հարկ, որոշմանիշային և սոցիալական վճարներ) ուսումնասիրություն, որի արդյունքում անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել:

ԾՐԱԳԻՐ՝ «1223 Միջազգային դատարաններում, միջազգային արբիտրաժներում և այլ միջազգային ատյաններում ՀՀ շահերի ներկայացում և պաշտպանություն, դրանց կողմից ընդունված վճիռների և որոշումների կատարման ապահովում»:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ «11001 Հայաստանի Հանրապետության շահերի ներկայացմանն ու պաշտպանությանն ուղղված փաստաբանական, իրավաբանական ծառայություններ»:

ՀՀ 2020թ. պետական բյուջեով «11001 Հայաստանի Հանրապետության շահերի ներկայացմանն ու պաշտպանությանն ուղղված փաստաբանական, իրավաբանական ծառայություններ» միջոցառման «4861 Այլ ծախսեր» հոդվածով տարեկան ճշտված պլանով նախատեսվել է 1,471,088.42 հազ. դրամի ծախս, ֆինանսավորումը կազմել է 1,154,506.99 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախսը)՝ 1,152,620.43 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 1,201,560.43 հազ. դրամ:

Կնքված պայմանագրերի շրջանակներում, հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա, մատուցված ծառայությունների և դրանց ծավալների վերաբերյալ կատարվել են աղյուսակ 7-ում բերված վճարումները՝

Աղյուսակ 7

1223-11001 «Հայաստանի Հանրապետության շահերի ներկայացմանն ու պաշտպանությանն ուղղված փաստաբանական, իրավաբանական ծառայություններ» միջոցառման ծախսերի վերաբերյալ

N	Կազմակերպության անվանումը	Վճարման ամսաթիվ	Վճարման նպատակը	Հազ. դրամ
1	Baker & McKenzie LLP ընկերություն	01.06.2020	Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոնում	128,283.8
2.	Baker & McKenzie LLP ընկերություն	31.07.2020	(Արբիտրաժային դատարանում) ՀՀ շահերը պաշտպանելու համար	67,375.0
3.	Baker & McKenzie LLP ընկերություն	13.08.2020	փաստաբանական և իրավաբանական ծառայություններ	69,835.2

4.	LALIVE ընկերություն	15.04.2020	«Կորսան Կորվիամ Կոնստրուկցիոն» ընկերության կողմից ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվ. տեխնոլոգիաների նախարարության դեմ հարուցված վարույթում ՀՀ շահերը պաշտպանելու համար փաստաբանական և իրավաբանական ծառայություններ	285,636.5
5.	LALIVE ընկերություն	18.06.2020	Գաղտնի որոշմամբ	41,392.5
6.	LALIVE ընկերություն	25.08.2020	Գաղտնի որոշմամբ	71,505.8
			Գաղտնի որոշմամբ	41,260.8
Ընդամենը ինն ամիս				705,289.5
1.	JAMS	11.11.2020	Վեճերի այլընտրանքային լուծման կենտրոնին (JAMS կենտրոն) դեպոզիտ վճարում	2,595.32
2.	Linklaters ընկերություն	01.12.2020	կանխավճար	30,645.0
3.		07.12.2020	Գաղտնի որոշմամբ	50,607.2
4.	Baker & McKenzie LLP ընկերություն	07.12.2020	Գործի համար էական նշանակություն ունեցող փաստաթղթերի հավաքում, ուսումնասիրություն և ներկայացում, ծախսերի ապահովմանն ուղղված միջնորդության վերաբերյալ քննարկումներ, նախագծում, ներկայացում, դրա վերաբերյալ մյուս կողմից ներկայացրած առարկությունների առնչությամբ պատասխան առարկությունների նախագծում և ներկայացում	56,804.0
5.	Baker & McKenzie LLP ընկերություն	8.12.2020	Արբիտրաժային գործի շրջանակում ընկերության կողմից ներգրավված փորձագետի կողմից ՀՀ հարավային հատվածում երկաթուղու կոնցեսիայի վերաբերյալ հաշվետվության մշակում	58,740.5
6.	Baker & McKenzie LLP ընկերություն	25.12.2020	Վկաների ցուցմունքների և փորձագետների եզրակացության վերաբերյալ լրացուցիչ աշխատանքների կատարում, գործի համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքների վերաբերյալ փաստաթղթերի կազմում, վերջնական պատասխան առկայության նախապատրաստում և ներկայացում, ինչպես նաև լսումների կազմակերպչական աշխատանքներ	58,047.0
7.	LALIVE ընկերություն	14.12.2020	Արբիտրաժային տրիբունալի ձևավորմանը, ՀՀ պահանջի մշակմանը և միջանկյալ միջոց կիրառելուն, փորձագիտական ընկերության ընտրությանը, իսպանական դատարաններում ՀՀ շահերի պաշտպանության նպատակով	47,248.5
8.	LALIVE ընկերություն	25.12.2020	Գաղտնի որոշմամբ	86,593.8

		իսպանական իրավախորհրդատուին օժանդակություն ցուցաբերելուն ուղղված, ինչպես նաև Ծառայությունների շրջանակներում չներառված ծառայություններ	
		Շահութահարկի վճարում	56,049.7
Ընդամենը 4-րդ եռամսյակ			447,330.9
Ընդամենը տարի			1,152,620.4

4. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

1. Առկա է անհամապատասխանություն «1003 Հանրային առողջության պահպանում» ծրագրի «11007 Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային վարակի (COVID-19) ախտորոշման միջոցառումների իրականացում» և 31001 «Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային վարակի (COVID-19) կանխարգելման, վերահսկման, բուժման նպատակով բժշկական սարքերի ձեռքբերում» միջոցառումների շրջանակներում ձեռքբերված ապրանքների ներմուծման ընթացքում մաքսային օրենսդրության պահանջի կատարման: Համաձայն «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» պայմանագրի 84-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին մասի և 104 հոդվածի 1-ին կետի Միջոցառումների մասով ներկրված ապրանքները ենթակա էին մաքսային հայտարարագրման:

2. Առկա է անհամապատասխանություն «1091-11001 Հանրային իրազեկում և հասարակական-քաղաքագիտական հետազոտություններ» միջոցառման շրջանակում Աշխատակազմի և «Հանրային կապերի և տեղեկատվական կենտրոն» ՊՈԱԿ-ի միջև 08.01.2020 թվականին կնքված «Դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» պայմանագրի 2.3.2 կետի պահանջի հետ՝ ըստ որի Աշխատակազմը պարտավոր է կատարել Ծրագրի (առանձին Միջոցառումների) իրականացման մոնիթորինգ, որը սակայն չի կատարվել:

3. Առկա է անհամապատասխանություն «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 22 հոդվածի 10-րդ մասի հետ՝ ըստ որի աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցներից պետական ծառայողը հատուկ առաջադրանքների և (կամ) որակյալ աշխատանքի կատարման համար պարգևատրվում է իր մինչև մեկ ամսվա պաշտոնային դրույքաչափով: Իրականում, 1136-11001 «Ծառայությունների, ծրագրերի համակարգում» միջոցառման 4111 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցներից հատկացված պարգևատրման ժամանակ ՀՀ վարչապետի 25.12.2020 թվականի թիվ 1428-Ա որոշմամբ բարեխիղճ աշխատանքի համար խրախուսված որոշ աշխատակիցների պարգևատրման գումարը գերազանցել է մեկ ամսվա պաշտոնային դրույքաչափը:

4. Առկա են անհամապատասխանություններ 1136-11011 «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր» միջոցառման շրջանակում կնքված

Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի և «Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի», «Ներդրումների աջակցման կենտրոն հիմնադրամի», «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ի միջև կնքված դրամաշնորհի հատկացման պայմանագրերի 3.6 և 3.8 կետերի պահանջների հետ:

Համաձայն պայմանագրի 3.6 կետի՝ յուրաքանչյուր ամսվա հաշվետվությունը հաստատելուց հետո և կազմակերպության կողմից հաջորդ ամսվա հայտ ներկայացնելու դեպքում, 5 աշխատանքային օրվա ընթացքում ԾԿԳ-ն իրականացնում է հաջորդ ամսվա համար կանխավճարային վճարում, իսկ պայմանագրի 3.8 կետի՝ յուրաքանչյուր ամսվա վճարումները նվազեցվում են նախորդ ամսվա անընդունելի ծախսի գումարի չափով կամ չօգտագործված գումարի մասով: 2020 թվականի ընթացքում վերոնշյալ դրույթները չեն կիրառվել:

5. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

Համաձայն ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի 2019 թվականի օգոստոսի 2-ի թիվ 785-Լ հրամանի՝ Վարչապետի աշխատակազմում նախատեսվել է 720 հաստիք, որը 2019 թվականի դեկտեմբերի 1-ի թիվ 1583-Լ հրամանով կատարված փոփոխության արդյունքում դարձել է 700 հաստիք: 1136-11001 «Ծառայությունների, ծրագրերի համակարգում» միջոցառման 4111 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով աշխատավարձի ֆոնդից վճարումներն իրականացվել են 530-557 աշխատակցի և տարվա ընթացքում 143-170 հաստիք չի համալրվել:

6. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. 1003-11007 «Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային վարակի (COVID-19) ախտորոշման միջոցառումների իրականացում» և 1003-31001 «Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային վարակի (COVID-19) կանխարգելման, վերահսկման, բուժման նպատակով բժշկական սարքերի ձեռքբերում» միջոցառման շրջանակում ապրանքների և նյութերի ներկրման ընթացքում չեն պահպանվել «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» պայմանագրի 84-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետով և 104 հոդվածի 1-ին կետով սահմանված պահանջները:
2. 1091-11001 «Հանրային իրազեկում և հասարակական-քաղաքագիտական հետազոտություններ» միջոցառումն իրականացնելիս չի ապահովվել «Հանրային իրազեկում և հասարակական-քաղաքագիտական հետազոտություններ» միջոցառման իրականացման նպատակով Վարչապետի աշխատակազմի և «Հանրային կապերի և տեղեկատվական կենտրոն» ՊՈԱԿ-ի միջև 08.01.2020 թվականին կնքված «Դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» պայմանագրի 2.3.2 կետի պահանջը:
3. 1136-11001 «Ծառայությունների, ծրագրերի համակարգում» միջոցառման 4111 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցներից պարգևատրում իրականացնելիս չեն պահպանվել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 22 հոդվածի պահանջները:
4. 1136-11011 «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր» միջոցառման իրականացման շրջանակում չեն կատարվել ՀՀ վարչապետի աշխատակազմի և «Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ», «Ներդրումների աջակցման կենտրոն հիմնադրամ», «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ի միջև կնքված դրամաշնորհի հատկացման վերաբերյալ պայմանագրերի 3.6 և 3.8 կետերի պահանջները:

7.ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ներմուծված ապրանքների և նյութերի մաքսային ձևակերպումները կատարելիս պահպանել հայտարարագրերի վերաբերյալ «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» պայմանագրի պահանջները:
2. Աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցներից պարգևատրում իրականացնելիս ապահովել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 22 հոդվածի պահանջների կատարումը:
3. Միջոցներ ձեռնարկել Աշխատակազմում ձևավորվող թափուր հաստիքների համալրման ուղղությամբ:
4. Ուսումնասիրել 11011 «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր» միջոցառման շրջանակում կնքված պայմանագրերի պահանջների չկատարման պատճառները՝ դրանք հետազայում բացառելու նպատակով:

Հաշվեքննության իրականացման ընթացքում հաշվեքննվող օբյեկտից ստացվել է բավարար տեղեկատվություն:

Հայտնաբերված փաստերը էական և համատարած բնույթ չեն կրում:

Ծանոթացման և ստորագրման նպատակով հաշվեքննության արձանագրությունը ներկայացվել է հաշվեքննության օբյեկտի ղեկավարին, որի վերաբերյալ ներկայացվել է գրավոր բացատրություն (կցվում է), առարկություններ չեն ներկայացվել:

ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021 թվականի փետրվարի 10-ի թիվ 20-Ա որոշման հիման վրա «Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմում 2020թ. պետական բյուջեի տարեկան կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ» հաշվեքննության արձանագրության (այսուհետ՝ Արձանագրություն) մեջ նշվածների վերաբերյալ հայտնում եմ, որ.

1. 1003 «Հանրային առողջության պահպանում» ծրագրի 2 միջոցառումների շրջանակներում ձեռքբերված նյութերի և ապրանքների մաքսային հայտարարագրերի ընդունումը իրականացվում է համապատասխան փաստաթղթերի ներկայացման դեպքում: Հայաստանի Հանրապետությանում կորոնավիրուսային վարակի (COVID-19) հետևանքով հայտարարված արտակարգ դրության պատճառով առաջացած սահմանափակումների և կարիքի ապահովման հրատապության արդյունքում բեռների տեղափոխումն իրականացվել է արտակարգ ռեժիմով և ոչ ամբողջական փաստաթղթերով: Արտերկրից համապատասխան փաստաթղթերի ու ներկայացմամբ պայմանավորված մաքսային հայտարարագրի ներկայացման գործընթացը երկարաձգվել է: Նշված գործարքը այժմ ընթացքի մեջ է:

2. 1136 «ՀՀ Վարչապետի լիազորությունների իրականացման ապահովում» ծրագրի 11011 «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր» միջոցառման «Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպություններին» 4521 հոդվածի հաշվեքննության վերաբերյալ հայտնում ենք հետևյալը՝
ա/ Արձանագրության 30-րդ էջում 2020 թվականի ընթացքում երեք կազմակերպություններին կատարված վճարումների վերաբերյալ աղյուսակում անհրաժեշտ է կատարել ուղղումներ՝ համաձայն ստորև բերված աղյուսակի տվյալների՝

h/h	Կազմակերպություն	Պայմանագրի համար	Վճարում, ՀՀ դրամ		
			ՀԲ վարկային միջոցներից	ՀՀ համաֆին. միջոցներից	Ընդամենը
1	ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆԿՈՒԲԱՏՈՐ ՀԻՄՆԱԴՐԱՄ	TPQI-EIF-OP	264,043.38	126,827.64	390,871.02
2	ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ	TPQI-ISC-OP	12,724.30	5,975.27	18,699.57
3	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖՈՆԴ ՓԲԸ	TPQI-ANIF-OP	430,797.31	197,721.50	628,518.81

Ընդամենը վճարումներ	707,564.99	330,524.41	1,038,089.40
ԱՄՆ դոլար	1,440,185.73	669,458.04	2,109,643.77

բ/ Արձանագրության 32-րդ էջում 2020 թվականի ընթացքում «Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ»-ին ըստ բաղադրիչների կատարված վճարումների վերաբերյալ աղյուսակում անհրաժեշտ է կատարել ուղղումներ՝ համաձայն ստորև բերված աղյուսակի տվյալների՝

ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ	Վճարում, հազ. ՀՀ դրամ		
	ՀՔ վարկային միջոցներից	ՀՀ համաֆին. միջոցներից	ԸՆԴԱՄԵՆԸ
Բաղադրիչ 1	37,341.28	16,368.74	53,710.02
Բաղադրիչ 2	95,466.63	46,967.26	142,433.89
Բաղադրիչ 3	25,230.26	10,901.05	36,131.31
Բաղադրիչ 4	17,720.93	6,310.06	24,030.99
Բաղադրիչ 5	88,284.28	46,280.53	134,564.81
ԸՆԴԱՄԵՆԸ	64,043.38	126,827.64	390,871.02

գ/ Արձանագրության 34-րդ էջում նշված «Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ»-ին վճարված 390,871.01 հազ. դրամը անհրաժեշտ է փոխարինել 390,871.02 հազ. դրամով:

դ/ Արձանագրության 35-րդ էջի վերջում «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ին վճարված ՀՀ համաֆինանսավորման միջոցներից-197,721.49 հազար դրամի փոխարեն անհրաժեշտ է նշել 197,721.50 հազ. դրամ

ե/ Արձանագրության 38-րդ էջում «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի նախահաշվով գործառնական ծախսերի վերաբերյալ աղյուսակում անհրաժեշտ է կատարել ուղղումներ՝ համաձայն ստորև բերված աղյուսակի տվյալների՝

ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ	Վճարում, հազ. ՀՀ դրամ		
	ՀՔ վարկային միջոցներից	ՀՀ համաֆին. միջոցներից	ԸՆԴԱՄԵՆԸ
Բաղադրիչ 1	9,960.45	6,155.55	16,116.00

Բաղադրիչ 2	1,950.00	390.00	2,340.00
Բաղադրիչ 3	6,010.00	1,330.00	7,340.00
Բաղադրիչ 4	2,880.00	578.00	3,458.00
ԸՆԴԱՄԵՆԸ	20,800.45	8,453.55	29,254.00

գ/ Արձանագրության 38-րդ էջի վերջում «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամին հատկացվել է ՀԲ վարկային միջոցներից – 12,724.29 հազար դրամի փոխարեն անհրաժեշտ է նշել 12,724.30 հազ. դրամ:

3. 1018 «Պետական հատվածի արդիականացում» ծրագրի ծրագրի 32001 «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի շրջանակներում «էլեկտրոնային կառավարման համակարգերի և սարքավորումների ձեռքբերում» միջոցառման «Այլ մեքենաներ և սարքավորումներ» 5129 հոդվածի հաշվեքննության վերաբերյալ հայտնում ենք հետևյալը՝

ա/ Արձանագրության 7-րդ էջի վերջում նշված "Մինչև 01.01.2020 թվականը 21,000,000 ԱՄՆ դոլարից ծախսվել է 3,842,066,8 ԱՄՆ դոլար" նախադասությունը անհրաժեշտ է վերաձևակերպել՝

"Մինչև 01.01.2020 թվականը 21,000,000 ԱՄՆ դոլար վարկային միջոցներից ծախսվել է 4,816,573.8 ԱՄՆ դոլար, այդ թվում 32001 «Այլ մեքենաներ և սարքավորումներ» հոդվածով՝ 3,842,066,8 ԱՄՆ դոլար (որը կազմում է վարկային միջոցների 18.3%-)

բ/ Արձանագրության 8-րդ էջի նախավերջին նախադասությունը անհրաժեշտ է մասամբ վերախմբագրել հետևյալ կերպ՝

«Ծրագրի շրջանակներում «էլեկտրոնային կառավարման համակարգերի և սարքավորումների ձեռք բերում» միջոցառման 2020 թվականի տարեկան ճշտված պլանով «Այլ մեքենաներ և սարքավորումներ» հոդվածով նախատեսվել է 2,043,090.80 հազ. դրամի ծախս, որի դրամարկղային ծախսը կազմել է 1,772,208.14 հազ. դրամ (1,663,104.41 հազ. դրամ՝ վարկային միջոցներից, 109,103.73 հազ. դրամ՝ ՀՀ համաֆինանսավորումից): Տարվա ընթացքում նշված հոդվածով փաստացի ծախսը կազմել է 1,772,208.14 հազ. դրամ և ՀՀ պետական բյուջեից համաֆինանսավորումը՝ 109,103.73 հազ. դրամ:

գ/ Արձանագրության 10-րդ էջի 1-ին կետով PSMP3-GO-2-9/A-3 պայմանագրի շրջանակներում 2020 թվականի ընթացքում վարկային միջոցներից փաստացի վճարված 226,251.3 հազար դրամի փոխարեն անհրաժեշտ է նշել 226,251.2 հազ. դրամ,

դ/ Արձանագրության 13-րդ էջի 8-րդ կետով PSMP3-GO-2-3/1 պայմանագրի շրջանակներում 2020 թվականի ընթացքում ՀՀ համաֆինանսավորման միջոցներից փաստացի վճարված 6,126.2 հազար դրամի փոխարեն անհրաժեշտ է նշել՝ 6,126.1 հազ. դրամ,

ե/ Արձանագրության 15-րդ էջի 5-րդ կետով նախադասությունը անհրաժեշտ է վերախմբագրել հետևյալ կերպ՝

2019 թվականի հունվարի 15-ին ՀՀ վարչապետի աշխատակազմի և «ՎԻ Իքս Սոֆթ» Լիմիթեդ և «Յունիքոմփ» ՓԲԸ Համատեղ ձեռնարկության միջև կնքված թիվ PSMP3-GO-2-2-6/1 պայմանագրի շրջանակներում նախատեսված մշակման, գործարկման և տվյալների փոխանցման ծառայությունների դիմաց «ՎԻ Իքս Սոֆթ» Լիմիթեդ ընկերությանը վճարվել է 120,606.84 հազ. դրամ:

զ/ Արձանագրության 16-րդ էջի 6-րդ կետով նախադասությունը անհրաժեշտ է վերախմբագրել հետևյալ կերպ՝

PSMP3-GO-2-2-7/1 պայմանագրի շրջանակներում համապատասխան հանձման-ընդունման ակտերով «Green Systems» LLC և «Յունիքոմփ» ՓԲԸ Համատեղ ձեռնարկությունը հանձնել, ՀՀ վարչապետի աշխատակազմն ընդունել է սարքավորումներ, որոնց դիմաց վճարվել է 1,214,113.08 հազ. դրամ:

է/ Արձանագրության 16-րդ էջի 8-րդ կետով նախադասությունը անհրաժեշտ է վերախմբագրել հետևյալ կերպ՝

PSMP3-GO-2-2-3/1 պայմանագրի շրջանակներում համապատասխան հանձման-ընդունման ակտերով «ՎԻ Իքս Սոֆթ» Լիմիթեդ և «Յունիքոմփ» ՓԲԸ Համատեղ ձեռնարկությունը իրականացրել է 51,087.71 հազ. դրամ արժողությամբ քաղաքացիների հետ հետադարձ կապի միասնական պորտալի, զանգերի կենտրոնի և mobile id համակարգերի մատակարարումը դրանց տեղադրման հետ միասին:

4. «1136. ՀՀ Վարչապետի լիազորությունների իրականացման ապահովում» ծրագրի «11001. Ծառայությունների, ծրագրերի համակարգում» միջոցառման 4111 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածից վճարված պարգևատրումների վերաբերյալ տեղեկացնում եմ, որ ՀՀ վարչապետի 25.12.2020 թվականի թիվ 1428-Ա որոշման մեջ հղում է կատարվել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասին և աշխատակիցներին պարգևատրումը տրվել է բարեխիղճ աշխատանքի համար, **ինչը նշված է նաև Ձեր արձանագրության մեջ:**

Ձեր կողմից արձանագրված «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 10-րդ մասի սահմանափակումը բացառապես

վերաբերվում է պետական ծառայողի հատուկ առաջադրանքների և որակյալ աշխատանքի կատարման համար պարգևատրվելուն:

5. 1136 «ՀՀ Վարչապետի լիազորությունների իրականացման ապահովում» ծրագրի 11011 «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր» միջոցառման «Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպություններին» 4521 հոդվածով «Ձեռնարկությունների հիմնադրամի», «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի և «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ի կողմից 2020 թվականին կատարված պահպանման ծախսերի վերաբերյալ հայտնում ենք հետևյալը՝

ՀՀ վարչապետի աշխատակազմի և Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի միջև կնքված պայմանագրի մասով Հաշվեքննիչ պալատն արձանագրել է, որ չնայած այն հանգամանքին, որ Դրամաշնորհի պայմանագիրը կքնվել է 04.05.2020 թվականին, սակայն Կազմակերպությանը փոխհատուցվել է 15.01.2020 թվականից սկսված կատարված ծախսերը: Այնինչ Դրամաշնորհի պայմանագրի 6.4 կետը հստակ սահմանում է, որ Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից, և տարածվում է 15.01.2020 թվականից ծագած հարաբերությունների վրա: Տվյալ դեպքում կատարված փոխհատուցումը լիովին իրավաչափ է, և համապատասխանում է պայմանագրին:

Բոլոր երեք կազմակերպությունների կանխավճարի գումարը երկուստեք համաձայնությամբ որոշվում է ելնելով տարեկան ծախսերի մեծությունից և կատարվող ծախսերի բնույթից, որոնց պարբերականությունը ամսական կտրվածքով չնչին փոփոխության է ենթարկվում, դրանք հիմնականում աշխատավարձեր են աշխատողների և քաղ-իրավական պայմանագրերով վարձու աշխատողների, տարածքների վարձակալության, կապի, գրասենյակային պարագաների և այլ նմանատիպ ծախսեր և մեր նպատակն է յուրաքանչյուր ամսվա սկզբին իրենց կողմից նախորդ ամսում կատարված ծախսերի վերաբերյալ ներկայացված հաշվետվությունից հետո ապահովել նույն կանխավճարի առկայությունը կազմակերպությունում պայմանագրի 3.3 կետի համաձայն՝ հաջորդ ամսվա ամսվա ծախսը կատարելու համար: Իսկ դա իրականացվում է կանխավճարի գումարից նվազեցնելով հաշվետվության ամսվա վերջին օրվա դրությամբ հաշվվներում առկա մնացորդը և չնդունված ծախսերի գումարը, ինչը համապատասխանում է պայմանագրի 3.3 և 3.8 կետերի պահանջներին:

Այսպիսով փոխհատուցվող ծախսի և իրենց հաշվի մնացորդի հանրագումարը կազմում է հաջորդ ամսվա համար անհրաժեշտ կանխավճարի գումարը: Ստուգումն իրականացնողների դիտարկմամբ այդ նվազեցումը պետք է կատարվեր ծախսի փոխհատուցվող գումարից, ինչը չի համապատասխանում պայմանագրի պահանջին, քանի որ պայմանագրի յուրաքանչյուր հաջորդ վճարումը ըստ պայմանագրի 3.3 կետի համարվում է կանխավճարային վճար, հետևաբար

անհրաժեշտ նվազեցումը կատարվում է կանխավճարից, այլ ոչ թե փոխհատուցվող ծախսից:

6. «1223. Միջազգային դատարաններում, միջազգային արբիտրաժներում և այլ միջազգային արյաններում ՀՀ շահերի ներկայացում և պաշտպանություն, դրանց կողմից ընդունված վճիռների և որոշումների կատարման ապահովում» ծրագրի «11001. Հայաստանի Հանրապետության շահերի ներկայացմանն ու պաշտպանությանն ուղղված փաստաբանական, իրավաբանական ծառայություններ» միջոցառման շրջանակներում «LALIVE» ընկերության հետ 26.08.2020 թվականին ստորագրված 21 արձանագրության հայերեն տարբերակը ներկայացվել է ուղղման:

Ինչ վերաբերվում է պայմանագրերի կատարման արդյունքների հանձնման- ընդունման արձանագրությունների Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ ներկայացուցչի գրասենյակի ղեկավար Լ. Դրմեյանի ստորագրելու լիազորություններին, ապա հայտնում եմ, որ Վարչապետի աշխատակազմի ղեկավարի 2020 թվականի նոյեմբերի 18-ի 1797-Ա հրամանի (հրամանը կցվում է) համաձայն Վարչապետի աշխատակազմի Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ ներկայացուցչի գրասենյակը սահմանվել է պատասխանատու ստորաբաժանում և Վարչապետի աշխատակազմի Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ ներկայացուցչի գրասենյակի ղեկավար Լ. Դրմեյանի կողմից փաստաթղթերը ստորագրվել են միայն վերոնշյալ հրամանի հաստատումից հետո:

Վարչապետի աշխատակազմի ֆինանսական
և հաշվապահական հաշվառման
վարչության պետ

Ս. Սահադյան